




Հ. ԿԱՐԱՊԵՏ ՏԵՐ-ՍԱՀԱԿԵԱՆ
Նահատակ բանաստեղծ
1882-1915

Հ. ԿԱՐԱՊԵՏ ՏԵՐ-ՍԱՀԱԿԵԱՆ

Զեմ ուզեր խօսիլ քերութեանց մասին, ա՛յնքան գեղեցիկ ես դուն,
Գեղեցիկ՝ երբ երգդ կը խորանայ անդունդն ի վար,
Երբ խռովայոյց սիրտդ կ'արթնցնէ հիաստանչ կրֆերը,
Երբ բնութիւն, կեանք, երեւակայութիւն եւ խոհ,
Ե՛ւ գիշերային խաւար, ամէնօրեայ լոյս,
Ի մի գուգեալ՝ կը կերտեն մեծ բանաստեղծութիւնդ.
Այդ հոյակապ աշխարհին մէջ, երկրային սահմաններէն անդին,
Ուր արշալոյսները կը տարտղեն իրենց առաջին շողը,
Ապրեցայ երկար ժամեր, անյեղի յափշտակութեան մէջ,
Ու հիմա, քեզմով վարակեալ՝ կ'ապրիմ քեզի հետ,
Քերթումներուդ հետ՝ որոնք անհուն ունին իրենց լարին վրայ.
Զեմ ուզեր խօսիլ քերութեանց մասին, ա՛յնքան գեղեցիկ ես դուն:

Գեղեցիկ՝ յղացմանդ մէջ, շնորհիդ մէջ եւ շարժումներուդ,
Մինչ Ադրիականը կը ծեծէ քու առջեւ հորիզոնին ամբարտակները,
Ու սպիտակաբաշ ալիքները, հողմերէն գերյուզեալ,
Կը հրմշտկեն մէկգմէկ, ահաբեկ գառներու նման.
Ահա՛ տեսարանը, որու մտերիւմն ես դուն եւ կարօտեալը, —
Մուր տարրին հմայքը, շիջող լոյսին հոգեվարքը, —
Եւ այս բոլորին վերեւ՝ քնարիդ զարթո՛ւնք,
Հոգւոյդ քոի՛չքը, որ լափիկոյ բոցերու մէջ,
Կը հասնի շտապ մթափօղեալ երկնքէն,
Ուր ամպամած լուսնին ցաւն ու տանջանքը,
Հրահրա՛ծ են արդէն դիւահար ներշնչումդ.
Զեմ ուզեր խօսիլ քերութեանց մասին, ա՛յնքան գեղեցիկ ես դուն:

Գեղեցիկ՝ կեանքին մէջ, բայց ա՛յ առաւել՝ մահուան,
Զի լուսապսակն ունիս մարտիրոսութեան հանճարեղ գլխուդ վերեւ,
Ու ներէ՛ ինձ, սուրբ մտածողութեանց փայլազոյն տղայ,
Եթէ ցաւին առթած այլայլումը, մեղաւոր արիւնիս մէջ,
Անգամ մը եւս կ'արթնցնէ անցամաքի ռիթմը.
Յիսնամեակի սկզբնաւորութեան էր որ կորսնցուցինք քեզ,
Վերագտնելու համար կիսադարձ վերջաւորութեան...
Ի՛նչ հրաշափառ յարութիւն՝ քուդ, յաղթական ի՛նչ վերադարձ.
Զեռփիդ՝ քերթողութեան ցուպը, կը հասնի՛ս յաւերժին համբաններէն,
Մինչ ողջունելու համար քեզ, մոլեմախանձ Ադրիականը,
Զէնքի՛ է կանչած վահանակիր կոհակները, — հոգւոյդ պատկե՛րը.
Զեմ ուզեր խօսիլ քերութեանց մասին, ա՛յնքան գեղեցիկ ես դուն: